վերջնագիրը և յայտարարելով Անդրկովկասի անկախութիւնը՝ վերսկսել հաշտութեան բանակցութիւնները: Այս քայլն անելիս վրացիները որոշ յոյսեր էին կապում Գերմանիայի հետ, որոնց ներկայացուցիչներին, Տրապիզոնում, Չխենկելին տեսել էր միւս պատգամաւորներից դաղտնի, իսկ Թուրքերի համար՝ Թիւրքիան ցանկալի բարեկամ էր:

Այսպիսով, հայերի համար ստեղծւում էր ահաւոր կացութիւն. միանալ վրացիներին ու Թուրքերին՝ նշանակում էր ձեռք քաշել ո՛չ միայն ամբողջ Թիւրքահայաստանից, այլ և Ռուսահայաստանի մի երրորդ մասից, և դեռ հարց էր՝ կը դոհանայի՞ն արդեօք Թիւրքերը միայն Բրեստ-Լիտովսկի սահմաններով: Զմիանալ՝ նշանակւում էր անջատւել հարեւաններից, մնալ մենակ, կտրւած ամբողջ աշխարհից, շրջապատւած մահմեդական ծովով, Թիւրքական բանակի սպառնալիքի տակ՝ դատապարտւած ստոյգ մահւան: Պէտք էր ընտրել չարիքներից փոքրագոյնը, և հայերը միացան հարեւանների որոշման:

Կային մարդիկ, որոնք, այդ օրերին, ցոյց էին տալիս Խորհրդային Ռուսաստանի ճամբան՝ առաջարկելով ձեռք մեկնել բոլշեւիկներին, որոնց առաջապահները դեռ մնում էին Բաքւում ու Սուխումում: Այդ տրամադրութեան որոշ չափով նպաստում էին և Թիֆլիսում ստացւող աղօտ լուրերը, որ, իբր թէ, Լենինը առանձին դեկրետով յայտարարել է Հայաստանի անկախութիւնը: Սակայն, այդ մտքի անհեթեթութիւնը այնքան էր ակներև, որ նոյնիսկ, նրա հեղինակները լուրջ քայլեր չարին այդ ուղղութեամբ: Ռուսաստանը շատ էր հեռու Հայաստանից, իսկ բոլշեւիկների ոյժը՝ աւելի քան խնդրական:

Ուրիշ ճանապարհ չկար: Ապրիլ 9-ին դումարւեց Սէյմի 22րդ նիստը, ուր դրւեց Անդրկովկասի անկախութեան յայտարարութեան հարցը: Մեռելատան էր նմանւում այդ օր Սէյմի դահլիճը: Մենակ հայերը չէին սգաւոր. վրացիներն էլ լու չէին զգում իրենց: Նրանց առաջնակարգ հռետորներից ոչ ոք ամբիոն չբարձրացաւ այդ օր: Մենշեւիկների կողմից անգոյն ու անհամ ճառեր արտասանեցին մի ինչ որ Օնիաշվիլի, Գէորգաձէն, Արսենիձէն, որոնք բոնազբօսիկ ոգևորութեամբ ու հակասական բացատրութիւններով աշխատում էին հիմնաւորել Անդրկովկասի անկախութեան անհրաժեշտութիւնը: Ռուս Սեմեոնովի և սոց.-յեղափոխական Լ. Թումանեանի համար դժւար չէր ջախջախել նրանց խախուտ փաստերը և մերկացնել անկախութեան իսկական շարժառիթները: Մանաւանդ, սպանիչ էր վերջինիս ճառը. «Ձեզ համար պէտք է պարզ լինի, ասում էր նա՝ դիմելով վրաց մենշեւիկներին, որ Անդրկովկասի ներկայ պայմաններում յայտարարւած անկախութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ո՛չ դառնալ կատարեալ ստրուկ Թիւրքիային... Անկախ Անդրկովկասը ո՛չ միայն չի տայ մեզ հաշտութիւն Թիւրքերի հետ, ո՛չ միայն չի բարելաւի մեր դրութիւնը, այլ աւելի ևս կը վատթարացնի, կը կապէ մեր ձեռքն ու ոտքը»:

Նոյն տեսակէտն էր պաշտպանում և Սեմեոնովը. «Ձեր անկախութիւնը կը փրկէ՞ ձեզ Թիւրք և գերման զօրքերից, հարցնում էր նա: Եւ ի՞նչ երաշխիք էք սպասում դուք... Անկախութեան յայտարարութիւնից յետոյ,